ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՄՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ/ ՎԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ *ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ*

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ՝ *ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ*

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *ՀԱՍՄԻԿ ԲԵՅԲՈՒԹՅԱՆ*

ՈՒՍՈՒՑԻՉ՝ *ԼԱԼԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

ԴՊՐՈՑ՝ *ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶՈԼԱՔԱՐԻ Ալ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ № 2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ*

Ք. Մարտունի

2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն ----------3
2. Կրտսեր դպրոցականի ինքնուրույն զարգացման հիմնախնդիրը ----------4
3. Կրտսեր դպրոցականի ինքնուրույն գործունեության կազմակերպման նշանակությունը----------6
4. Աշակերտի ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերը --------- 8
4.1 Ինքնուրույն աշխատանքի տեսակները տարրական դասարաններում----15
5. 2-4-րդ դասարանների մայրենիի դասագրքերը - ----------20
6. Եզրակացություն ---------- 21
7. Օգտագործված գրականություն ---------- 22
8. Դասապլաններ – ----------23, 24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տարրական դպրոցի հիմնական նպատակը սովորողի մտավոր և ֆիզիկական կարողությունների, լեզվամտածողության, գրագիտության, տրամաբանական մտածողության զարգացման հիմքերի և աշխատանքային նախնական հմտությունների ձևավորումն է:

Այսօրվա կյանքի առաջընթացն ու սրընթաց զարգացումները դպրոցի առջև դնում են մի շարք կարևոր հարցեր և պարտավորեցնում են այնպիսի խնդիրների լուծում, որոնցից առաջնահերթը սովորողների ճանաչողական հետաքրքրությունների, նրանց ստեղծագործական մտածողության, ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողությունների ձևավորումն ու զարգացումն է: Իսկ նոր պահանջները ենթադրում են նոր և ժամանակակից ձևերի ու հնարների, մեթոդների և ուղիների որոնում:

Ստորև փորձենք ներկայացնել մի շարք ուղիներ, որոնք կնպաստեն խնդրի լուծմանը:

1. ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Ինչպես գիտենք, միջնակարգ կրթության բովանդակային խնդիրը ներկայացվում է ուսումնական բնագավառներով և բաղադրիչներով: Յուրաքանչյուր ուսումնական բնագավառ ներկայացվում է կրթության բովանդակության հետևյալ բաղադրիչներով.

1. Գիտելիքների համակարգ:
2. Կարողություններ և հմտություններ՝ հաղորդակցական, ճանաչողական, համագործակցային, ստեղծագործական, ինքնուրույն գործունեության:
3. Արժեքային համակարգ:

Այս բաղադրիչներով նախատեսված կրթությունը սովորողներին պետք է զինի համապատասխան գիտելիքներով, իսկ կարողությունների և հմտությունների ամբողջությունը հնարավորություն է ընձեռում գործնականում կիրառելու ստացած գիտելիքները, հարստացնելու ճանաչողական գործունեության սեփական փորձը, զարգացնելու տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գործունեության և ստեղծագործական ունակությունները, նպաստելու են նրա սոցիալականացմանը: Եթե ավելի պարզ արտահայտվենք, սովորողները ձեռք են բերում կարողունակություն՝ կոմպետենցիա: Իսկ այս ամենի արդյունքում կձևավորվի ներդաշնակ զարգացած անձ և քաղաքացի:

Արդի դպրոցում բավականաչափ աշխատանքներ են տարվում նշված բաղադրիչների հաջող իրականացման ուղղությամբ: Սակայն խնդիր է հարուցում սովորողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպումը:

Տարրական դասարաններում ուսուցման գործընթացում դեռևս գերակշռում է ուսուցման ֆրոնտալ ձևը, երբ աշակերտների գործողությունները հիմնականում կախված են ուսուցչի անմիջական հրահանգներից, ինչն արգելակում է երեխաների ինքնուրույնության զարգացումը, որն էլ հետագայում չի խթանի միջին դպրոցի 5-6-րդ դասարաններում գրքի շուրջ իրականացվող ինքնուրույն աշխատանքի, առաջադրանքների, ստեղծագործական բնույթի հանձնարարությունների կատարման հարցում:

Կրտսեր դպրոցական տարիքից սովորողներին պետք է վարժեցնել, հմտացնել ինքնուրույն աշխատանքի: Եթե երեխան փոքր տարիքից սկսում է ինքնուրույն աշխատել, ապա այն դառնում է նրա սեփականությունը ողջ կյանքի ընթացքում:

Սովորողները գիտելիքների ձեռքբերման ճանապարհին պետք է ունենան գործուն, ակտիվ մասնակցություն: Ուսուցիչը պետք է հրաժարվի սովորեցնողի, վերահսկողի, խրատողի, ավանդական դերից: Դառնա ուսումնական գործընթացը կազմակերպող, ուղղորդող, խորհրդատու և որպես գործընկեր՝ սովորողների հետ մասնակցի որոնողական աշխատանքներին:

2. ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Աշակերտներն իրենք պիտի դառնան իրենց ուսումնառության գործընթացի քանդակագործն ու շինարարը»:

Կ. Չիբուխյան

Ի տարբերություն ուսուցչակենտրոն ուսուցման՝ աշակերտակենտրոն ուսուցման առանցքում մտածողության և ստեղծագործական կարողությունների զարգացումն է, որտեղ աշակերտը դառնում է որոնող, ստեղծագործող, ուսումնասիրող, հետազոտող, կիրառող:

Իր ծավալած ուսումնասիրություններում ինքն է նախաձեռնողը: Արդյունքում կխթանվի սովորողի ակտիվությունը, երևակայությունն ու հայտնագործություններ անելու ձգտումը:

Բացի այդ, ինքնուրույնությունն ու նախաձեռնելու հնարավորությունը աշակերտին սովորեցնում են ավելի պատասխանատու լինել սեփական գործի հանդեպ, գործել անկաշկանդ, առանց ավելորդ լարվածության քննել, վերլուծել, համադրել, եզրահանգումներ կատարել:

Աշակերտի մտավոր աշխատանքը, ուսման հաջողությունը և անհաջողությունները նրա հոգևոր կյանքն են, նրա ներքին աշխարհը, որի անտեսումը կարող է հասցնել տխուր հետևանքների:

Ռուս մեծ մանկավարժ Վ. Ա. Սուխոմլինսկին գրել է. «Ինչպիսի՜ թրթռուն հուզմունք էին երեխաները ոտք դնում դպրոցի շեմից ներս իրենց ուսման առաջին առաջին օրերին, ինչպիսի՜ վստահությամբ էին նայում նրանք ուսուցչի աչքերին: Իսկ ինչու՞ հաճախ պատահում է, որ մի քանի ամիս, երբեմն էլ մի քանի շաբաթ հետո մարում է այդ կրակը նրանց աչքերում, ինչո՞ւ որոշ երեխաների համար ուսումը դառնում տանջանք: Չէ՞ որ բոլոր ուսուցիչներն անկեղծորեն ցանկանում են պահպանել մանկական անմիջականությունը, ուրախ ընկալումը և աշխարհի հայտնագործումը, ցանկանում են, որ ուսումը երեխաների համար լինի ոգեշնչում, հրապուրիչ աշխատանք»:

Այս անհաջողության պատճառը այն է, որ ուսուցիչը քիչ է ճանաչում երեխայի հոգևոր աշխարհը, սահմանափակվում է սովորեցնողի անձնական դերով, դրանով իսկ արգելք է հանդիսանում սաների անհատական աշխարհի հարստության դրսևորմանը:

Սովորողներին մատուցելով պատրաստի ճշմարտություններ, ընդհանրացումներ, հետևություններ, ուսուցիչը նրանց հնարավորություն չի տալիս մոտենալու մտքի ու խոսքի աղբյուրին, կապում է նրանց երազանքի, երևակայության, ստեղծագործության թևերը: Սովորողը ակտիվ, կենդանի գործուն էակից վեր է ածվում ասես հիշողության մեխանիզմի: Աշակերտին չի կարելի զրկել ինքնուրույն դատելուց, մտածելուց, հետազոտելուց, որոշումներ կայացնելուց: Նրան պետք է հնարավորություն տալ մտնելու կարդացածի աշխարհ, ինքնուրույն որոնումներ ու մտահանգումներ կատարել, խաղալ, դրսևորել ինքնուրույն դերեր, որը հետագայում կնպաստի իրական աշխարհում ինքնադրսևորման ու ինքնահաստատման: Եթե կրտսեր դպրոցական տարիքում սովորողին զրկենք հուզականությունից, երազելուց, երևակայելուց, ստեղծագործելուց, ինքնուրույնությունից, հենվենք սոսկ գիտելիք տալու գործընթացին, մենք նրանց կդարձնենք «չորացած ծաղիկ», որովհետև ցամաքեցնում ենք այդ տարիքին բնորոշ «աղբյուրները»:

Կ. Ուշինսկին գրել է, որ երեխան բնականից հոգեկան ծուլություն չունի, նա սիրում է ինքնուրույն գործունեություն, ցանկանում է, որ ամեն ինչ ինքն անի:

3. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Երբ ճիշտ ենք կազմակերպում ինքնուրույն աշխատանքը, սովորողները առավել խորը և ճկուն գիտելիքներն են ձեռք բերում, քան ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքներ ձեռք բերելու դեպքում:

Ըստ դիդակտիկական նպատակի և բովանդակության՝ տարատեսակ ինքնուրույն աշխատանքի կազմակերպումը նպաստում է սովորողների ճանաչողական և ստեղծագործական ունակությունների, մտածողության զարգացմանը:

Տարրական դասարաններում ինքնուրույն աշխատանքը մեծ նշանակություն ու դեր ունի:

Ի՞նչ է ինքնուրույն աշխատանքը

Ինքնուրույն է համարվում այն աշխատանքը, որի ընթացքում սովորողները պարզորոշ պատկերացնում են աշխատանքի նպատակը, դրա կատարման կարգը և կատարում են այն՝ առանց ուսուցչի անմիջական մասնակցության:

Ինքնուրույն աշխատանքը դիտարկվում է որպես ուսուցման միջոց: Այն ունի որոշակի առանձնահատկություններ:

Ուսուցիչները հաճախ են օգտագործվում աշակերտների ակտիվությունը խթանող հնարներ և համարում են, որ իրենք կազմակերպեցին ինքնուրույն աշխատանք: Այդ հնարների կիրառմամբ, անշուշտ, աշակերտները սկսում են ինքնուրույն աշխատել, բայց այն դեռ ինքնուրույն աշխատանք չէ:

Ի՞նչ է ինքնուրույնությունը

Ի՞նչ է ինքնուրույն աշխատանքը

Ինքնուրույնությունը անհատի անձնային որակ է, իսկ ինքնուրույն աշխատանքը՝ ուսումնական աշխատանքի ձև: Ինքնուրույնության և ինքնուրույն աշխատանքի մեջ գոյություն ունի սերտ կապ: Ինքնուրույն աշխատանքը մի կողմից արդեն ձևավորված ինքնուրույնության արտահայտումն է, մյուս կողմից՝ ինքնուրույնության զարգացմանը

նպաստող միջոց: Այսինքն՝ ինքնուրույն աշխատանքը նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը՝ որպես անհատ որակ: Դրանք զարգացնում են սովորողների տրամաբանությունը, ակտիվությունն ու ճանաչողությունն:

Եթե ուսուցիչը ուսուցման ընթացքում չի խթանում աշակերտների ինքնուրույնությանը, և օգնում է առաջին իսկ դժվարության ժամանակ, ապա այդպիսի աշակերտը առանձնապես ակտիվություն չի ցուցաբերում խնդիրների լուծման նպատակով ինքնուրույն ուղիների որոնման գործում: Աշակերտին տրվում է պատրաստի արդյունքը, չնայած, որ նա կարող է ինքնուրույն որոնել և գտնել լուծման ուղիները: Հաճախ ուսուցիչը չի էլ հետաքրքրվում, թե ինչպես է աշակերտը գրել տրված առաջադրանքը, այլ սահմանափակվում է արդյունքների ճշտության ստուգումով: Դա իր հերթին սահմանափակում է աշակերտի հետաքրքրությունը: Նա չի էլ մտածում խնդրի լուծման տարբեր ուղիներ գտնել:

Չնայած որ ժամանակակից դպրոցում գերակշռողը պետք է լինի աշակերտակենտրոն ուսուցումը, պետք է կիրառվեն հանրակրթության ոլորտում մշակված և հաստատված արդի մեթոդները, բայց դեռևս իշխում է ուսուցման «ֆրոնտալ» ձևը: Բայց բոլոր ուսուցիչները չէ, որ օգտագործում են ուսուցման ձևը: Այդ դեպքում աշակերտի գործողությունները հիմնականում կախված են ուսուցչի անմիջական հրահանգներից: Այդ գործողությունները մեծ մասամբ կատարվում են գրատախտակի մոտ:

Այդպիսի ձևը թույլ չի տալիս, որ երեխան զարգանա, ինքնուրույն գտնի իր համար նախատեսված առաջադրանքի լուծման ուղիները: Ինքնուրույն աշխատանքի հմտությունները չեն ծագում իրենք իրենց: Դրանք պետք է ձևավորի ուսուցիչը: Ընդ որում ինքնուրույնությունը (ինքն իրեն չի) զարգանում է աստիճանաբար, դաստիարակվում է դասից դաս, դասարանից դասարան: Ժամանակի ընթացքում դասերին ինքնուրույն աշխատանքի պարբերական կազմակերպման և տրված առարկայից տնային աշխատանքների բազմազան տեսակների հետ դրա համապատասխանեցումը մշակում է ինքնուրույն աշխատելու կարողություններ:

<u>Հետազոտության նպատակը</u>

Իմ դասավանդած դասարանում ստեղծել անպիսի միջավայր, պայմաններ, մշակել մեթոդներ, որ աշակերտները կարողանան առաջադրանքները կատարել ինքնուրույն: Իմ առջև դրված խնդիրը իրագործելու համար նախ և առաջ մշակեցի համապատասխան մեթոդներն ու միջոցները:



1. **Կազմակերպչական փուլ**

Այս փուլը կարելի է համարել նախապատրաստական, այսինքն՝ ես ստեղծեցի երեխաների համար համապատասխան աշխատանքային միջավայր: Սա շատ կարևոր է և տրամադրող, որովհետև համապատասխան միջավայրը ստեղծելով՝ խթանում ենք երեխայի հետաքրքրությունը և տրամադրվածությունը կատարվելիք աշխատանքի նկատմամբ:

2. Բառարանների, հուշաթերթիկների, բառ-քարտերի բաշխում, որոնք անհրաժեշտ են աշխատանքի ընթացքում:

Քանի որ իմ հետազոտությունը կատարվում էր «Մայրենիի» առարկայի շրջանակում, ես անհրաժեշտ համարեցի բառարանների, հուշաթերթիկների և բառ-քարտերի բաշխումը: Դա հնարավորություն է տալիս օգտվել աշխատանքը կատարելիս՝ փոքրիկ հուշումների տեսքով:

3. Նախապատրաստական փուլ

Սա այն փուլն է, երբ աշակերտներին մեկ անգամ ևս զգուշացրեցի, որ պետք է հանգիստ նստեն, լարվածություն չլինի, չխանգարեն ընկերներին, անպայման պահպանեն լռություն, հետևեն կարգ ու կանոնին, ուշադիր աշխատեն, կատարեն ինքնաստուգում և այլն: Այս բոլոր կանոնների պահպանումը կհանգեցնի աշխատանքի արդյունավետության բարձրացումը:

4. Կողմնորոշիչ փուլ

Այս փուլում մանրամասն բացատրեցի աշխատանքի բովանդակությունը: Աշակերտները ընթերցեցին առաջադրանքը, ապա վերընթերցեցին: Մտագրոհի միջոցով պարզեցի, թե աշակերտներից ով ինչպես էր հասկացել առաջադրանքը: Շատ կարևոր է լսել բոլորին, որովհետև այդ ձևով կարելի է առանձնացնել առաջադրանքի անհասկանելի մասերը և դարձյալ բացատրել: Աշակերտները պետք է կարողանան իմաստավորել առաջադրանքը, առանձնացնել, թե ինչ է տրված, ինչ պետք է իմանալ և ինչ կատարել:

Աշակերտներին նախապես բաժանել էի հուշաթերթիկներ, որոնց բովանդակությանը ծանոթացան: Բացի դրանից բաժանեցի նաև բառ-քարտեր, բաշխեցի աշխատանքի պլանը: Պլանը գրեցի նաև գրատախտակին: Դասի շուրջ նախապես մշակված էին նաև պաստառներ, սխեմաներ և այլն: Դրանք նույնպես փակցրեցի գրատախտակին: Այս փուլում ձևավորվում է ուսումնական աշխատանք ծավալելու կարևոր ձևերից մեկը՝ աշխատանքի համար կարևոր նյութեր ընտրելու կարողությունը:

5. Հիմնական փուլ

Ինքնուրուն աշխատանքը կատարվեց հենց այս փուլում: Աշակերտներից ոմանք շատ արագ կատարեցին առաջադրանքը, մի քանիսը դժվարացան: Բայց կրկին բացատրելուց հետո կարողացան կատարել:

6. Ամփոփիչ փուլ

Նշված աշխատանքները կատարելուց հետո կարելի է իրականացնել ամփոփիչ փուլը: Այս դեպքում կատարվում է անդրադարձ, այսինքն աշխատանքները գնահատում եմ, քննարկում և ամփոփում:

7. Կարելի է առանձնացնել ևս մեկ կառուցվածքային փուլ՝ <u>ստուգիչ</u> փուլ, որի ընթացքում աշակերտը, ինքն իր սեփական նախաձեռնությամբ, ստուգում է իր աշխատանքը և գնահատում այն: Այս փուլում իրականացվում է ինքնաստուգում և ինքնավերահսկում:

Բացի վերը նշված միջոցից, գոյություն ունեն սովորողի ինքնուրույն գործունեությունը կազմակեպելու զանազան հնարներ և մեթոդներ: Ուսուցիչը, հենվելով աշակերտների տարիքային և անհատական առանձնահատկությունների վրա, հաշվի առնելով նրանց հետաքրքրությունները, ուսումնական դրդապատճառները, պետք է տեղին կազմակեպի ուսումնական գործընթացը ու ստեղծի այնպիսի ուսումնական իրավիճակներ, որոնց արդյունքում լուծվում են անհատի մտավոր, բարոյական, ֆիզիկական և հուզական զարգացմանը նպաստող գործոններ: Իսկ անհատը կզարգանա այն դեպքում, երբ նա լիակատար յուրացնի համապատասխան ուսումնական գործողություններ կատարելու կարողություններ, որոնք էլ կարող է դառնան ինքնուրույնության ձևավորման հիմքը: Փորձեմ ներկայացնել կրտսեր դպրոցականի ինքնության, գործունեության մի քանի եղանակներ:

1. Ուսման ժամանակակից մեթոդների հիմքում սովորողների ինքնուրույն գործունեությունն է: Կիրառելով ակտիվ մեթոդները (քառաբաժան, կանխատեսման աղյուսակ, խճանկար, շրջագայություն պատկերասրահում և այլն) ակներև է դառնում սովորողների անհատական, ինքնուրույն մտածողությունը, աշխատանքը:
2. Սովորողների ինքնադրսևորման, ինքնազարգացման, ինքնուրույն աշխատանք կազմակերպելու միջոցներից է տեղեկատվական աղբյուրներից օգտվելը: Չափորոշչային և ծրագրային այս պահանջն մայրենիի ուսումնական գործընթացում շատ կարևոր է: Աշակերտը պետք է կարողանա տեղեկատվական դաշտից դուրս բերել իրեն անհրաժեշտ նյութերը և ինքնուրույն այն կազմակերպել, ուսումնասիրել:

3. Յուրօրինակ ինքնուրույնության դրսևորում է տնային առաջադրանքների կատարումը: Աշակերտը զերծ է ուսուցչի և ընկերների օգնությունից, հույսն իր ուժերի, գիտելիքների, կարողությունների, այլ տեղեկատվական աղբյուրներից օգտվելու վրա է (բառարաններ, մանկական հանրագիտարաններ, ուսումնական ձեռնարկներ):
4. Շերտավորված ստեղծագործական բնույթի առաջադրանքների կատարումը ինքնուրույն գործունեություն ծավալելու միջոցներից է (իհարկե, այս դեպքում ուսուցիչը պետք է լավ ճանաչի իր սաների անհատական, ճանաչողական հնարավորությունները, ներուժը):
5. Ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ձև է նաև արտադասարանային աշխատանքը: Այն կատարվում է ծրագրային նյութերից դուրս, որպես լրացուցիչ տեղեկատվությունների հաղորդման, ձեռք բերած ճանաչողական գիտելիքների ինքնուրույն գործադրման միջոց:
6. Սովորողների ինքնուրույն գործունեության եղանակներից է հետազոտական գործունեության կազմակերպումը, որի արդյունքում աշակերտները կկարողանան.
   - Ինքնուրույն հասնել արդյունքի
   - Նպատակին հասնելու ճանապարհին դժվարությունների հաղթահարում
   - Տեղեկատվական աղբյուրներից օգտվել
   - Ինքնագնահատվել
   - Գնահատել ընկերների աշխատանքի արդյունքը
   - Կձևավորվեն տեղեկատվություններ հավաքելու, որոնելու և ընտրելու հմտություններ
   - Կկարողանան իրենց գործողությունները ինքնուրույն պլանավորել, գործողությունների քայլաշար մտածել, վերլուծել, ցանկացած իրավիճակում կողմնորոշվել:
7. Կրտսեր դպրոցականի ներդաշնակ զարգացման գործում անչափ կարևորվում է խաղն ու խաղային միջավայրը: Խաղը կարելի է դիտարկել և՛ որպես ուսուցման միջոց, և՛ որպես տեխնոլոգիա, և՛ որպես ինքնուրույն գործունեություն: Պետք է նշել, որ տարրական դասարաններում աշխատելիս խաղը պիտի դառնա ուսումնական խնդիրն իրականացնելու միջոց: Ուսուցման խաղային մեթոդը խաղ

չէ բառի բուն իմաստով: Այն հանձնարարությունը, որն ունի ճանաչողական նշանակություն, խաղային ձև տալն է՝ խաղի մեկ կամ մի քանի տարրեր ներմուծելու ճանապարհով. խաղային սյուժե, բովանդակություն, դերեր, որոշակի կանոնների կատարման միջոցով նպատակին հասնելու արդյունք:

Գոյություն ունեն բազմաթիվ խաղեր, որոնց մեջ ինքնուրույնությունը զարգացնելու նպատակով առաջնահերթ է դերային խաղը:

Կրտսեր դպրոցականի ուսուցման և ուսումնառության գործընթացը պիտի կառուցել՝ հենվելով մտածողության և երևակայության վրա: Այս դեպքում փոխվում է սովորողի դիրքը, նա դառնում է իր գործունեությունը կառուցողը ու ստեղծողը, որից ելնելով՝ աշակերտը արդյունքին հասնելու համար ճիգ կգործադրի, դժվարություններ պիտի հաղթահարի: Այս ժամանակ ի հայտ են գալիս նրա ուժեղ կողմերը: Հիշենք իտալացի գրող Ջանի Ռոդարի հետևյալ միտքը. «Խաղերը միայն մանկական երևակայության զարգացման թեմա չէ: Նրանք սիրում են ուժից վեր խնդիրներ լուծել: Նրանց համար դա մեծանալու միակ հնարավորությունն է»: Այստեղից էլ ուսումնական գործունեությունն ուղղվում է որոնողական, ստեղծագործական խնդիրների լուծմանը: Հետևաբար, երևակայության և նրա զարգացման վրա էլ կկառուցվի ուսուցումը:

Երևակայության զարգացման համար այն խաղն է կարևոր, որը ստեղծում է նրա մասնակիցը: Նման խաղերում առաջնային է ստեղծագործական սկիզբը՝ սովորողն ինքն է տնօրինում իր վերցրած դերը, հաստատում կանոններ, ընկերների հետ փոխհարաբերություններ, ծավալում խաղի սյուժեն, բովանդակությունը և իր հայեցողությամբ այն ավարտում: Այս խաղերը նպաստում են նաև հաղորդակցական կարողությունների զարգացմանը:

4.1 ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Ինքնուրույն աշխատանքի հիմնական տեսակները կարելի է դասակարգել ըստ մի քանի հատկանիշների, որոնք միևնույն ինքնուրույն աշխատանքը բնութագրում են տարբեր տեսանկյուններից: Այն ներկայացնենք աղյուսակի տեսքով:

Ինքնուրույն աշխատանքի դասակարգման հատկանիշները				
1.Ըստ ուսումնական նպատակների:	2.Ըստ ճանաչողական գործունեության բնույթի:	3.Ըստ կազմակերպման ձևի:	4. Ըստ ինքնուրույն աշխատանքի ընթացքում դիդակտիկ նյութերի կիրառության:	5.Ըստ կատարման տեղի:

1. Ըստ ուսումնական նպատակների

1.1 *Հիմնական գիտելիքների կրկնության և նոր նյութի ընկալմանը նախապատարստող*

1.2 Նոր նյութի ուսումնասիրությանը նպաստող:

1.3 Գիտելիքները համակարգող:

1.4 Որոշակի կարողություններ զարգացնող:

1.5 Ստուգող, վերահսկող:

2. Ըստ ճանաչողական գործունեության բնույթի

2.1 Ըստ տրված նմուշի, օրինակ՝ գրե՛լ տառեր, թվեր, սոսնձել տուփ և այլն, այսինքն՝ աշխատանքներ, որոնք առավելապես հիմնված են ընդօրինակման վրա: Այդպիսի աշխատանքների կատարման ընթացքում աշակերտների ինքնուրույն կարողությունները սահմանափակվում են պարզ վերարտադրման միջոցով՝ ըստ նմուշի կրկնելով գործողությունները: Այնուամենայնիվ, այդպիսի աշխատանքերի դերը բավականին մեծ է:

2.2 Կառուցողական, որոնք ստեղծագործական մոտեցում են պահանջում: Ընդ որում, կամ ցույց են տալիս առարկան, որի շուրջ պետք է աշխատել, կամ էլ նշում են հարցը, թեման, որը պետք է բացահայտեն:

Օրինակ՝ կարող են պատրաստել որևէ խաղալիք, հորինել շարադրություն որևէ թեմայով և այլն: Սովորողին տրվում է որոշակի ազատություն, ինքնուրույնություն ինչպես բովանդակային որոշման, այնպես էլ աշխատանքի հնարների ընտրության մեջ: Դրանք սովորեցնում են վերլուծել իրադարձությունները, երևույթները, փաստերը, նպաստում են ճանաչողության նկատմամբ ներքին դրդապատճառների զարգացմանը, պայմաններ են ստեղծում դպրոցականների մտավոր ակտիվության զարգացման համար:

3. Ըստ կազմակերպման ձևի

3.1 Ընդհանուր ճակատային, երբ բոլոր սովորողները կատարում են միևնույն աշխատանքը:

3.2 Խմբային, երբ սովորողների տարբեր խմբեր աշխատում են տարբեր առաջադրանքների վրա:

4. Ըստ ինքնուրույն աշխատանքի ընթացքում դիդակտիկ նյութերի կիրառության

4.1 Աշխատանք դասագրքով, տեղեկատու գրականության շուրջ՝ բառարաններ, հանրագիտարաններ և այլն: Տարրական դասարաններում մեծ տեղ է հատկացվում գրքի, գեղարվեստական տեքստի, նկարազարդման շուրջ կատարվող ինքնուրույն աշխատանքին: Գրքի շուրջ ինքնուրույն աշխատելու կարողությունը սովորելուն նպաստող ամենակարևոր կարողություններից մեկն է: Առանց դրա հնարավոր չէ լիարժեք յուրացնել մատուցվող գիտելիքները: Երբ աշակերտը չի կարողանում աշխատել գրքի շուրջ, ուսուցման պրոցեսը նրա համար դառնում է տանջանք: Գրքի շուրջ աշխատելու կարողությունների զարգացումը իրականացվում է բոլոր առարկաների դասերի ժամանակ:

4.2 Շարադրություններ ըստ հենակետային բառերի, նկարների շուրջ և այլն:

4.3 Դիտումներ և գործնական աշխատանքներ: Դիտումների համար որպես դիտարկվող առարկաներ կարող են լինել շրջապատող առարկաները և երևույթները:

Սովորողները հաշվում են, չափում, ստեղծում: Նրանք դիտարկում են առարկաները և երևույթները անմիջականորեն բնության մեջ, անցկացվում են փորձեր՝ կատարելով գործնական աշխատանքեր:

Այս տիպի ինքնուրույն աշխատանքները ունեն շատ մեծ նշանակություն, քանի որ նպաստում են աշակերտի դիտողականության, հետազոտական կարողությունների և հմտությունների զարգացմանը:

4.4 Աշխատանք ըստ բաշխիչ նյութերի կիրառման:

4.5 Գրաֆիկական աշխատանքներ:

4.6 Ինքնուրույն աշխատանքներ, որոնք կախված են դիդակտիկ նյութերի ստեղծման հետ: Աշակերտները պատրաստում են ինքնաշեն գրքեր, ալբոմներ, զանազան թեմաներով քարտեր և այլն:

5. Ըստ կատարման տեղի

5.1 Դասարանում:

5.2 Արտադասարանական կամ արտադպրոցական ուսումնական միջոցառումների ժամանակ:

5.3 Տանը:

Իսկ ի՞նչ ծավալով և ի՞նչ բնույթի առաջադրանքներ են անհրաժեշտ առաջադրել ինքնուրույն կատարելու համար: Այսպես՝

1. Առաջադրանքների ծավալը պլանավորելու համար անհրաժեշտ է հաշվի առնել սովորողների աշխատանքի տեմպը: Ժամանակը ճիշտ կազմակերպելու համար պետք է նախապես կատարել ինքնուրույն աշխատանքի համար պլանավորված առաջադրանքը: Այդ դեպքում առաջադրանքի համար ուսուցչի կողմից ծախսված ժամանակը անհրաժեշտ է բազմապատկել երեքով, հենց հատկապես այդքան րոպե է անհրաժեշտ առաջադրանքի կատարման համար: Առաջադրանքի կատարման ընթացքում ուսուցիչը կարող է հասկանալ, թե ինչ տարրեր կարող են արգելակել կամ արագացնել սովորողների աշխատանքը:

2. Սովորողների ինքնուրույն ուսումնական գործունեության համար նախատեսված առաջադրանքների բնույթը անհրաժեշտ է աստիճանաբար բարձրացնել:
3. Առաջադրանքները պետք է ընտրել այնպես, որ նպաստեն դրանց նկատմամբ հետաքրքրության զարգացմանը:
4. Սովորաբար աշակերտները ոչ միաժամանակ են ավարտում ինքնուրույն աշխատանքը: Ինքնուրույն աշխատանքի համար առաջադրանքներ ընտրելիս պետք է հաշվի առնել, որ գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման գործընթացում սովորողներից պահանջում է տարբեր ժամանակահատված: Դրա համար պետք է նախապես պատրաստել առաջադրանքներ, լրացուցիչ առաջադրանքներ՝ արագ աշխատող աշակերտների համար:
5. Դժվար է ընտրել այնպիսի առաջադրանքներ, որոնք համապատասխանում են բոլոր աշակերտների ներուժին: Դրա համար պետք է առաջադրել տարբերակված առաջադրանքներ՝ հաշվի առնելով սովորողների առանձին խմբերի ներուժը:
6. Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված առաջադրանքները ցանկալի է, որ աշակերտներից պահանջեն կամային ջանքեր:
7. Ինքնուրույն աշխատանքի համար ցանկալի է առաջադրել այնպիսի առաջադրաներ, որոնց կատարման համար կպահանջվի գիտելիքների կիրառում ներ իրավիճակներում: Միայն այդ դեպքում ինքնուրույն աշխատանքը կնպաստի սովորողների ճանաչողական ունակությունների ձևավորմանը և նախաձեռնողականության դրսևորմանը:
8. Ցանկալի է, որ ինքնուրույն աշխատանքի համար նախատեսվող առաջադրանքները հետաքրքրեն սովորողներին:
9. Առաջադրանքների բովանդակությունը պետք է մատչելի լինի աշակերտներին, հենված լինի երեխաների կենսափորձի վրա, բայց միևնույն ժամանակ կգտնվի նրանց զարգացման «մեձակա գոտում», պարունակի որոշակի դժվարություն, որը երեխան կձգտի հաղթահարել:
10. Յուրաքանչյուր թեմայի շուրջ առաջադրանքների ընտրության ընթացքում պետք է հատուկ ուշադրություն դարձնել հասկացության բոլոր հատկանիշների բազմակողմանիորեն ամրապնդմանը, հստակ առանձնացնել այն

կարողություններն ու հմտությունները, որոնք անհրաժեշտ է ձևակերպել և ամրապնդել:

11. Առաջադրանքների համակարգը պետք է կազմակերպել փուլ առ փուլ: Անհրաժեշտ է սկսել տիպային առաջադրանքներից, մանրամասն բացատրել դրանց լուծման մեթոդները: Ընդ որում, աշակերտենրին պետք է առաջարկել գործողություններ կատարել ըստ օրինակի:

    Վերջին փուլում անհրաժեշտ էր առաջարկել առաջադրանքներ ամբողջովին ինքնուրույն կատարման համար: Այս փուլում նպատակահարմար է սովորողներին առաջարկել ստեղծագործական բնույթի առաջադրանքներ:

4. 2-4-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ

Քանի որ դասագրքերի դերն ու նշանակությունը չափազանց մեծ է սովորողի ինքնուրույն աշխատանքի կազմակերպման և իրականացման գործընթացում, որոշեցի անդրադառնալ այս թեմային: Փորձել եմ ուսումնասիրել արդի դպրոցի տարրական ուսուցման մայրենիի դասագրքերը:

Դասագրքերը մեկը մյուսի տրամաբանական շարունակությունն են, որոնք համապատասխանեցվել են այդ տարիքին բնորոշ հոգեբանամանկավարժական առանձնահատկություններին և հետաքրքրություններին: Իսկ հետաքրքրությունը տրված են թեմատիկ միավորումներով, կան գեղեցիկ նկարազարդումներ, հետաքրքրաշարժ լեզվատրամաբանական և ստեղծագործական բնույթի առաջադրանքներ: Թեմատիկ խմբերում ընդգրկված նյութերը՝ պատմվածք, հեքիաթ, բանաստեղծություն, առակ, խնդուկ, առած, հանելուկ, շուտասելուկ, շուտասելուկ համապատասխանեցվել են կրտսեր դպրոցականների աշխարհաընկալմանը:

Դրանք նպաստելու են արժեքային համակարգի ձևավորմանը, նորանոր գիտելիքներ ձեռք բերելու, համապատասխան կարողություններ և հմտություններ ձևավորելուն, ստեղծագործական մտածողության և երևակայության զարգացման: Բազմաբնույթ նյութերն ու լեզվատրամաբանական առաջադրանքները սովորողների ուսուցումը դարձնում են ոչ թե քարացած, այլ բերկրալի: Ամեն ինչ նպատակաուղղված է ինքնուրույն, ինքնավստահ, առողջ և ներդաշնակ անձի ձևավորմանը: Դասագրքերում բազմաթիվ են երեխաների աշխարհաճանաչողական գիտելիքներ տվող գեղարվեստական ստեղծագործություններն ու առաջադրանքները:

Ընդ որում, դրանք պատրաստի վիճակում չեն տրվում, որպես պատրաստի գիտելիք, այլ առաջադրանքները կատարելիս ստեղծում է այնպիսի իրավիճակ, որ սովորողներն իրենք պիտի հայտնագործեն, հայտնաբերեն, ձեռք բերեն զանազան գիտելիքներ իրական երևույթների մասին՝ զգայության, ընկալման, մտապատկերման միջոցով: Ուրեմն դասագրքերը հնարավություն են տալիս ինքնուրույն կերպով գիտելիքներ ձեռք բերել, որը երեխայի զարգացման գրավականն է:

5. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Իմ հետազոտության արդյունքում եկա այն եզրակացության, որ ուսուցչի տրված գիտելիքի, օգտագործած զանազան մանկավարժական մեթոդների և հնարների շնորհիվ սովորողների մոտ կձևավորվեն և կզարգանան որոշակի կարողություններ և հմտություններ, որոնք իրենց հերթին կնպաստեն սովորողի ինքնուրույնությանը, զարգացմանը:

Նշված մեթոդներն ու հնարները ամբողջական համարել չի կարելի: Ուսումնական ողջ գործունեության ընթացքում ուսուցիչը պիտի նորանոր հայտնագործություններ կատարի:

Օգտագործելով դասագրքի տված հնարավորությունները, կիրառելով ուսուցման ժամանակակից մեթոդներն ու ձևերը, հեղինակավոր մանկավարժների փորձը՝ պիտի ձգտենք կրթել և դաստիարակել այնպիսի սերունդ, որն ապագայում կկարողանա ինքնուրույն կողմնորոշվել այս բարդ հասարակական-քաղաքական աշխարհում, ինքնուրույն որոշումներ կատարել և ինքնադրսևորվել:

6. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա. Տեր Գրիգորյան «Հայոց լեզվի մեթոդիկա» Տարրական դասարաններ: Ուսումնական ձեռնարկ մանկավարժական բուհերի համար- Երևան, Լույս, 1980
2. Ջանի Ռոդարի –Ստեղծագործական երևակայության քերականություն, Երևան- 1995թ. «Շաղիկ»
3. Դ. Գյուրջինյան, Թ. Ալեքսանյան, Ա. Գալստյան «Ուսուցչի ձեռնարկ»- Երևան, Էդիթ Պրինտ 2011
4. Մայրենի 2-4: Ուսուցչի ձեռնարկ, Կ. Թորոսյան և ուրիշներ, Երևան, Մանմար 2013
5. Վ. Ա. Սուխոմլինսկի – Սիրտս նվիրում եմ երեխաներին: Կոլեկտիվ դաստիարակելու մեթոդիկա: Լույս 1986թ.
6. www.aniedu.am
7. Հայոց լեզու, գրականություն:
   Հանրակրթական դպրոցի առարկայակաչ չափորոշիչ և ծրագիր- Երևան- Անտարես 2006թ.

Դ ա ս ա պ լ ա ն

Ուսուցիչ՝ Լալա Գրիգորյան

Առարկա՝	**Մայրենի**	**Ամսաթիվ**	**08.11.2021**	**Կիսամյակ**	**I**	**Դասարան**	I
Թեմա՝	«Ա» հնչյուն –տառի ուսուցում:						
Օգտագործվող նյութեր՝	Տառապատկերներ, քարտեր, պաստառներ, պրոյեկտոր, էկրան, մրգեր և բանջարեղեն՝ զամբյուղներով, տերևներ, Ա-ի մեծադիր տառապատկերներ, դիմակներ և այլն:						
Դասի նպատակը՝	Ուսուցանել «Ա» հնչյուն –տառը , հյուսել պատմություն թեմատիկ նկարի շուրջ, ամրապնդել պատմություն –բառ-վանկ-հնչյուն-տառ շղթան, հարստացնել բառապաշարը, ամրապնդել բառի հնչյունային վերլուծությունը:						
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						
Վերջնարդյունքները	Կիմանան կարդալ ու գրել «Ա» հնչյուն –տառը, տրամաբանական հաջորդականությամբ վերարտադրել նկարի բովանդակությունը, գործնականում կիրառել բառակապակցության գիտելիքները, նկարագրել, բնութագրել կերպարները:						

Գործողություն-ներ (ժամ/ տևողություն)	**Ուսումնական գործունեություն** *Աշակերտներ*	**Ուսումնական գործունեություն** *Ուսուցիչ*	**Հարցադրումներ**	**Կիրառվող մեթոդ (ներ)**
Խթանում-3ր Իմաստի ընկալում-25ր Կշռադատում - 10ր Տնային հանձնարարություն-3-5ր. Անդրադարձ - 2ր.	Նախորդ դասի ամփոփում, նոր դասի նախապատրաստում:	Ողջույնի խոսք, հարցեր և պատասխաններ, «Ա» հնչյուն –տառի մասին գիտելիքներ, նկար-պատմության ցուցադրում, սահիկների ցուցադրություն, տառի գրություն, բեմականացում, ամփոփում, վկայականի հանձնում:	Դասի վերաբերյալ հարցեր	Մտագրոհ, հարց և պատասխան Կռահի՛ր, խաղային, դերային
Տնային աշխատանք				

Մեթոդմիավորման նախագահ՝ _____

Փոխտնօրեն՝ _____

Դ ա ս ա պ լ ա ն

Ուսուցիչ՝ Լալա Գրիգորյան

Առարկա՝	**Մաթեմատիկա**	**Ամսաթիվ**	**08.11.2021**	**Կիսամյակ**	**I**	**Դասարան**	III
Թեմա՝	Կլոր տասնյակների բաժանումը միանիշ թվի:						
Օգտագործվող նյութեր՝	Դասագիրք, աշխատանքային տետր, երկրաչափական պատկերներ, թեմային վերաբերվող պաստառներ:						
Դասի նպատակը՝	Սովորեցնել կլոր տասնյակների բաժանումը միանիշ թվի, կրկնել աղյուսակային բաժանումը և բազմապատկումը, ամրապնդել գործողությունների կատարման կարգը, ամրապնդել համագործակցելու և խմբերով աշխատելու կարողությունները:						
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						
Վերջնարդյունքները	Կարողանան կլոր տասնյակները բաժանեն միանիշ թվի, կատարեն վարժությունները և ամրապնդեն անուղղակի խնդիրների լուծման ձևերը:						

Գործողություն-ներ (ժամ/ տևողություն)	**Ուսումնական գործունեություն** *Աշակերտներ*	**Ուսումնական գործունեություն** *Ուսուցիչ*	**Հարցադրումներ**	**Կիրառվող մեթոդ (ներ)**
Խթանում-3ր **Իմաստի ընկալում-25ր** **Կշռադատում - 10ր** **Տնային հանձնարարություն-3-5ր.** **Անդրադարձ -2ր.**	Աշակերտները վերհիշում են տասնյակները, թվարկում են, կլոր տասնյակներրը (ամենամեծը, ամենափոքրը) կատարում են գործողություններ:	Հարց ու պատասխանի միջոցով կատարվում է մտագրոհ, վերհիշում են բաժանումը, բազմապատկումը կլոր տասնյակները, կատարում է վարժություններ, աշխատում են դասագրքով, տրվում է ինքնուրույն աշխատանք և այլն:		Մտագրոհ, հարց և պատասխան, կռահի՛ր:
Տնային աշխատանք	*Վարժությունների և խնդիրների լուծում:*			

Մեթոդմիավորման նախագահ՝ _____

Փոխտնօրեն՝ _____